Կարգապահական գործ թիվ ԿԳ-16207

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մայիսի 11-ի թիվ 76-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/50-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՄԻԿՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Սեդրակ Ասատրյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Մամիկոն Մանուկյանին (արտոնագիր թիվ 349) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

«Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը (**այսուհետ՝ Ընկերություն կամ Դիմող**) դիմելով Պալատ հայտնել է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում է քննվում թիվ ԵՔԴ/0543/02/08 քաղաքացիական գործն ըստ Հենրիկ Գևորգյանի հայցի ընդդեմ Ընկերության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Դիմողը հայտնել է, որ Ընկերության շահերի ներկայացուցչից տեղեկացել են, որ 10.05.2016 թվականին նշանակված դատական նիստին, որպես Հենրիկ Գևորգյանի շահերի ներկայացուցիչ է ներգրավվել փաստաբան Մամիկոն Մանուկյանը (**այսուհետ նաև՝ Պատասխանող**)՝, որը դեռևս 29.01.2001 թվականից զբաղեցրել է Ընկերության իրավաբանական վարչության պետի պաշտոնը, և հայցվորի հետ կնքված բոլոր պայմանագրերում, առկա է նրա ստորագրությունը:

Ըստ Դիմողի՝ ստացվում է, որ փաստաբան Մամիկոն Մանուկյանը, ով հանդիսացել է Ընկերության աշխատակից, նշված քաղաքացիական գործի շրջանակներում հանդես է գալիս, որպես հակառակ կողմի շահերի պաշտպան փաստաբան, ինչով ըստ Դիմողի՝ կոպտորեն խախտում է փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված նորմերը:

Դիմելով Պալատ՝ «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ավագյանը խնդրել է փաստաբան Մամիկոն Մանուկյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Դիմումին կից ներկայացվել են «Հայփոստ» ՓԲԸ ներկայացուցիչ Մ. Մանուկյանի մասնակցությամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի կողմից 01.04.2004թ. կայացված վճռի, «Հայփոստ» ՓԲԸ և «Հ. Գևորգյան և ընկ.» ՍՊԸ միջև 02.04.2001թ.

կնքված և իրավաբանական վարչության պետ Մ. Մանուկյանի ստորագրությամբ համաձայնեցված պայմանագրի, «Հայփոստ» ՓԲԸ և «Թեղուտհրատ» ՍՊԸ միջև 05.12.2001թ., 07.10.2002թ. և 01.12.2004թ. կնքված և Մ. Մանուկյանի ստորագրությամբ հաստատված պայմանագրերի պատճենները, ինչպես նաև «Հայփոստ» ՓԲԸ շահերի պաշտպանության նպատակով Ընկերության կողմից իրավաբանական վարչության պետ Մամիկոն Մանուկյանին 14.11.2005թ. տրված լիազորագրի բնօրինակը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի 22.09.2016թ. թիվ 410-Ա/ԿԳ-16207 որոշմամբ փաստաբան Մամիկոն Մանուկյանի (արտոնագիր թիվ 349) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 3.2.8 և 3.5.2 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով՝ փաստաբան Մամիկոն Մանուկյանի կողմից առերևույթ իր նախկին վստահորդ «Հայփոստ» ՓԲ ընկերության դատավարական հակառակորդ կողմի՝ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵՔԴ/0543/02/08 քաղաքացիական գործով հայցվոր Հենրիկ Գևորգյանի հանձնարարությունն ընդունելը բացառող հանգամանքների առկայության պարագայում նոր վստահորդի (Հենրիկ Գևորգյանի) շահերը ներկայացնելու (շահերի հակասություն) վարքագիծը ստուգելու նպատակով:

26.09.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռոբերտ Մանվելյանին:

3. **<u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողի ներկայացուցիչը կարգապահական գործը նախապատրաստողի մոտ բացատրություն չի տվել, Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

Պատասխանողը Կարգապահական գործի նախապատրաստական փուլում և Խորհրդի կողմից քննության ժամանակ բացատրություն տալով վկայակոչել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ և 18-րդ հոդվածները, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 20-րդ հոդվածներ և հայտնել, որ կարգապահական գործի վարույթը պետք է կարճվի, քանի որ ինքը Դիմող ընկերությունում որպես իրավաբանական վարչության պետ աշխատել է աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչը չի կարող դիտվել որպես իրավաբանական ծառայության համար իրեն դիմելու դեպք, որը բնորոշ է վստահորդին, գործատուի հանձնարարությունները կատարել է ի պաշտոնե, այլ ոչ թե վճարովի իրավաբանական ծառայության պայմանագրով, աշխատանքից

ազատվելուց որևէ պայմանագրով, պարտավորագրով չի պարտավորվել չհրապարակել «Հայփոստ» ՓԲԸ-ին վերաբերվող որևէ տեղեկություն:

Պատասխանողը մեջբերել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 ենթակետը, որի համաձայն. «*Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում): Այն դեպքում, երբ փաստաբանի վստահորդը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություն է, ապա փաստաբանը (փաստաբանական գրասենյակը) կարող է այդ սուբյեկտի դեմ ներկայացնել իր վստահորդի շահերը, բացառությամբ, երբ՝ (1) ներկայացվող նոր գործն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է նախկին գործի կամ դրա որոշ էական հանգամանքների հետ, կամ (2) փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և նախորդ վստահորդի միջև կնքված պայմանագրում նախատեսվել է սահմանափակում՝ ապագայում այդ վստահորդի դեմ որևէ գործ ներկայացնելու վերաբերյալ*»:

Պատասխանողը հղում է կատարել նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.1, 3.2.3, 3.2.4, 3.2.5, 3.2.6, 3.2.7 և 3.2.8 ենթակետերին ու պատճառաբանել, որ Դիմողը չի հանդիսանում և երբեվիցե չի հանդիսացել իր վստահորդը, որ «Հայփոստ» ՓԲԸ-ն կամ նրա ղեկավարը քննարկվող գործով երբեևէ իրեն չեն դիմել, Դիմողին քննարկվող գործի վերաբերյալ խորհուրդներ չի տվել:

Պատասխանողը նշել է նաև, որ թիվ ԵՔԴ/0543/02/08 քաղաքացիական գործի շրջանակներում հայցվոր Հենրիկ Գևորգյանի պահանջը ոչ թե վերաբերվում է այնպիսի պայմանագրերի, որոնք կնքվել են վերջինիս ու «Հայփոստ» ՓԲԸ-ի միջև, այլ ընդհակառակը, քանի որ իր վստահորդի պահանջը ուղղված է առանց իր հետ հեղինակային պայմանագիր կնքելու իր մտավոր գործունեության արդյունքում ստեղծված համակարգչային ծրագրերի օգտագործումը դադարեցնելուն կամ դրանց օգտագործման դիմաց փոխհատուցում ստանալուն, շարունակելով, որ պայմանագրերի բացակայության պայմաններում չի կարող խոսք գնալ դրանցում Պատասխանողի դերակատարության կամ առնչության մասին:

Պատասխանողը նշել է նաև, որ կարգապահական վարույթը պետք է կարճվի նաև վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, քանի որ գործի մեջ ինքը ներգրավվել է 12.08.2015թ. դատարանին ներկայացված՝ գործի վարույթը վերսկսելու դիմումով, մինչդեռ Դիմողը դիմումը ներկայացրել է վաղեմության ժամկետի ավարտից հետո՝ 24.08.2016թ-ին:

Խորհրդի նիստի ժամանակ Պատասխանողը բացատրություն տալով նշեց, որ այդ գործով միայն մի դիմում է գրել գործի վարույթը վերսկսելու մասին և երկու դատական նիստի է մասնակցել, մեկը՝ Գ. Խանդանյանի վարույթում, իսկ գործը վերամակագրելուց հետո մեկ նիստ էլ՝ Գ. Մազմանյանի նախագահությամբ, այժմ այդ գործով չի զբաղվում, իր տեղեկություններով այդ գործով այժմ մասնակցում է Գոռ Մաթևոսյանը, ինչպես նաև նշեց, որ «Հայփոստ» ՓԲԸ-ն հանրային նշանակության կազմակերպություն է, պետության կողմից էլ ճանաչվել է ազգային օպերատոր, որովհետև փոստային ծառայությունը միայն Հայփոստն է իրականացնում:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործը նախապատրաստողը 25.11.2016թ. եզրակացությամբ հաստատված է համարել, որ՝

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում է քննվում թիվ ԵՔԴ/0543/02/08 քաղաքացիական գործն ըստ Հենրիկ Գևորգյանի հայցի ընդդեմ Ընկերության' գումարի բռնագանձման պահանջի մասին:

Նշված գործով Հենրիկ Գևորգյանի շահերի ներկայացուցիչ է ներգրավվել փաստաբան Մամիկոն Մանուկյանը, որը դեռևս 29.01.2001 թվականից զբաղեցրել է Ընկերության իրավաբանական վարչության պետի պաշտոնը, և հայցվորի հետ կնքված բոլոր պայմանագրերում, առկա է նրա ստորագրությունը:

01.04.2004թ. Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի վճռից պարզ է դառնում, որ այդ գործով Ընկերության ներկայացուցիչ է հանդիսացել փաստաբան Մ.Մանուկյանը:

Դիմումին կցված Ընկերության 15.11.2005թ. լիազորագրից պարզ է դառնում, որ փաստաբան Մամիկոն Մանուկյանը լիազորվել է դատական ներկայացուցչություն իրականացնել Վ.Մխիթարյանի և մյուսների ընդդեմ ՀՀ ՍԱՊՀ Վանաձորի ՏԿ և Ընկերության՝ կենսաթոշակի վճարման պահանջով:

Պատասխանողը գրավոր դիրքորոշում է հայտնել եզրակացության վերաբերյալ, գտնելով, որ կարգապահական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստ պետք է նշել նաև այն փաստերը, որոնց մասին արդեն իսկ նշված է սույն որոշման 3.2 կետում՝ պատասխանողի համառոտ բացատրության մեջ:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կկանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ՝ Կարգ**)22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) Պատասխանողը փաստաբանի արտոնագիր է ստացել՝ 22.07.1997թ-ին:

2) Պատասխանողը 1997թ-ից մինչև 31.07.2007թ-ն աշխատել է «Հայփոստ» ՓԲԸ-ում՝ 29.01.2001թ-ից զբաղեցնելով «Հայփոստ» ՓԲԸ իրավաբանական վարչության պետի պաշտոնը:

3) «Հայփոստ» ՓԲ ընկերության դեմ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵՔԴ/0543/02/08

քաղաքացիական գործով 10.05.2016 թվականին նշանակված դատական նիստին, որպես Հենրիկ Գևորգյանի շահերի ներկայացուցիչ է ներգրավվել փաստաբան Մամիկոն Մանուկյանը:

4) Մամիկոն Մանուկյանը սույն կարգապահական գործի քննության պահին չի ներկայացնում Հենրիկ Գևոգյանի շահերը:

5) «Հայփոստ» ՓԲԸ-ն կապի ոլորտում հանրային նշանակության կազմակերպություն է:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա փաստաթղթերով, այդ թվում՝ Դիմողի կողմից ներկայացրած դիմումով և Պատասխանողի բացատրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 22.02.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Մամիկոն Մանուկյանն արտոնագիրը ստացել է 22.07.1997թ.:

Մամիկոն Մանուկյանի նկատմամբ 2006-2017թթ ժամանակահատվածում 4 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետը խախտելու և վերապատրաստման դասընթացին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար:

Անդամավճար վճարելու, ինչպես նաև վերապատրաստման դասընթացին մասնակցելու պարտականությունը չկատարելու համար հարուցված կարգապահական վարույթները կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով, իսկ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետը խախտելու համար հարուցված կարգապահական վարույթը կարճվել է խախտման հիմքի բացակայության հիմքով:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մամիկոն Մանուկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ ***փաստաբանն իրավունք չունի իրավաբանական օգնություն ցույց տալու այն դեպքում, երբ ... 4) պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:***

Կանոնագրքի **3.2.8** ենթակետի համաձայն՝ ***Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:***

Կանոնագրքի **3.5.2** ենթակետի համաձայն՝ ***Փաստաբանը պարտավոր է հրաժարվել իրավական օգնության ցույց տալու պայմանագրից, եթե իր կողմից տվյալ վստահորդին իրավական օգնություն ցույց տալը հանձնարարության կատարման փուլում պարզ է դարձել Կանոնագրքի 3.2 կետով*** [Հանձնարարությունն ընդունելը բացառող հանգամանքները, շահերի հակասություն] ***նախատեսված հանգամանքներից մեկը:***

Կանոնագրքի **3.2.2** ենթակետի համաձայն՝ *Փաստաբանն իրավունք չունի*

իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում): ***Այն դեպքում, երբ փաստաբանի վստահորդը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական հիմնարկ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություն, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություն է, ապա փաստաբանը (փաստաբանական գրասենյակը) կարող է այդ սուբյեկտի դեմ ներկայացնել իր վստահորդի շահերը, բացառությամբ, երբ՝ (1) ներկայացվող նոր գործն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է նախկին գործի կամ դրա որոշ էական հանգամանքների հետ, կամ (2) փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և նախորդ վստահորդի միջև կնքված պայմանագրում նախատեսվել է սահմանափակում՝ ապագայում այդ վստահորդի դեմ որևէ գործ ներկայացնելու վերաբերյալ:***

Կանոնագրքի **1.4** կետով բացահայտված են Կանոնագրքում օգտագործվող սահմանումները, որի վերաբերելի մասի համաձայն՝ ***հանրային նշանակության կազմակերպություն - ապրանքային շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող****, ինչպես նաև առողջապահության, սպորտի, կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության, տրանսպորտի և* ***կապի,*** *կոմունալ ոլորտներում, ինչպես նաև ֆինանսական շուկայում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններ (այդ թվում՝ բանկեր, ապահովագրական կազմակերպություններ, գազի, ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարում իրականացնող կազմակերպություններ).*

Սույն կարգապահական գործի շրջանակներում Խորհուրդը անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1. ***Փաստաբան Մամիկոն Մանուկյանը 1997թ-ից մինչև 31.07.2007թ-ն աշխատել է «Հայփոստ» ՓԲԸ-ում, իսկ 29.01.2001թ-ից զբաղեցրել է «Հայփոստ» ՓԲԸ իրավաբանական վարչության պետի պաշտոնը, նրա և «Հայփոստ» ՓԲԸ-ի հարաբերությունները կարո՞ղ են համարվել փաստաբան և վստահորդ հարաբերություններ:***
2. ***Եթե Դիմողի և Պատասխանողի հարաբերությունները հավասարեցվում են վստահորդ – փաստաբան հարաբերություններին, ապա առկա եղե՞լ են նախկին վստահորդի դեմ գործով նոր վստահորդ Հենրիկ Գևորգյանի հանձնարարությունն ընդունելը բացառող հանգամանքներ, թե ոչ:***

Անդրադառնալով առաջին հարցադրմանը՝ Խորհուրդը գտնում է, որ այնքանով, որքանով փաստաբան Մամիկոն Մանուկյանը 1997թ-ից մինչև 31.07.2007թ-ն աշխատել է «Հայփոստ» ՓԲԸ-ում, իսկ 29.01.2001թ-ից զբաղեցնելով «Հայփոստ» ՓԲԸ իրավաբանական վարչության պետի պաշտոնը, նրա և «Հայփոստ» ՓԲԸ-ի հարաբերությունները կարող են համարվել փաստաբան և վստահորդ հարաբերություններ, այն պարզ պատճառով, որ փաստաբան Մամիկոն Մանուկյանը իրավաբանական օգնություն է տրամադրել իր գործատուին, այդ թվում՝ դատական ներկայացուցչություն է իրականացրել:

Այդ մասին Խորհուրդը իրավական դիրքորոշում է հայտնել փաստաբան Ռոմեն Ահարոնյանի վերաբերյալ 17-017 ԿԳ կարգապահական գործով 27.08.2015թ. թիվ 12/1-Ա որոշմամբ:

Նշված որոշման համաձայն՝ Խորհուրդը գտել է, որ «... *ՀՀ օրենսդրությունը մի շարք նորմատիվ իրավական ակտերում օգտագործում է վստահորդ եզրույթը, թե փաստաբան-վստահորդ հարաբերությունների և թե ներկայացուցիչ-վստահորդ հարաբերությունների համար:*

Այսպես, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44.1. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Որպես վկա չեն կարող հարցաքննվել ***ներկայացուցիչները*** *կամ պաշտպանները այն փաստական հանգամանքների առնչությամբ, որոնք նրանց հայտնի են դարձել իրենց* ***վստահորդին*** *իրավաբանական ծառայություն մատուցելիս.»: Համանման նորմ է նախատեսված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 93 հոդվածի 2-րդ մասում, ըստ որի «Պաշտպանը, ինչպես նաև տուժողի, քաղաքացիական հայցվորի և քաղաքացիական պատասխանողի* ***ներկայացուցիչը*** *չի կարող պաշտպանյալի կամ վստահորդի կողմից մասնակցել քրեական գործով վարույթին, եթե նա տվյալ գործով իրավաբանական օգնություն է ցույց տալիս կամ ցույց տվել այն անձին, որի շահերը հակասում են պաշտպանյալի կամ* ***վստահորդի*** *շահերին, ինչպես նաև այդ անձի հետ գտնվում է ազգակցական կամ անձնական կախվածության այլ հարաբերությունների մեջ»:*

Վերլուծվող իրավանորմերի լույսի ներքո Խորհուրդն արձանագրում է, որ օրենսդիրը «վստահորդ» եզրույթն օգտագործել է թե փաստաբանի և թե ներկայացուցչի համար, ուստի Պատասխանողի այն պնդումը, որ, երբ ինքը ՓԲԸ-ին իրավաբանական ծառայություններ է մատուցել փաստաբան չի եղել, հետևաբար նաև ՓԲԸ-ն իր վստահորդը չի եղել, անհիմն է:»

Պալատի խորհուրդը վերահաստատելով իր նախկին դիրքորոշումը գտնում է, որ «Հայփոստ» ՓԲԸ-ն հանդիսանում է փաստաբան Մամիկոն Մանուկյանի նախկին վստահորդը:

Ինչ վերաբերում է բարձրացված երկրորդ հարցին, ապա Խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 1.4 ենթակետի իմաստով «Հայփոստ» ՓԲԸ հանդիսանում է հանրային նշանակության կազմակերպություն և սույն կարգապահական գործի շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որով կհաստատվեր Կանոնագրքի 3.2.2 ենթակետում նշված բացառության առկայությունը, ինչպես նաև նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգի առկայությունը:

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը*, իսկ 5-րդ մասի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Նույն կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի*:

Սույն կարգապահական գործով չի հաստատվել, որ ներկայացվող նոր գործը՝ Հենրիկ Գևորգյանի հանձնարարությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է Դիմողին, որպես վերջինիս աշխատակից, Պատասխանողի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ նախկին որևէ գործի կամ դրա որոշ էական

հանգամանքների հետ, կամ Պատասխանողի և Դիմողի միջև կնքված պայմանագրում նախատեսվել է սահմանափակում՝ ապագայում այդ վստահորդի դեմ որևէ գործ ներկայացնելու վերաբերյալ:

Հետևաբար այս պարագայում, Խորհուրդը գտնում է, որ նշված փաստն ապացուցված չէ:

Պալատի խորհուրդն անդրադառնում է նաև վաղեմության ժամկետի մասով պատասխանողի փաստարկին:

Սույն կարգապահական գործով պատասխանողին վերագրվող անթույլատրելի արարքը համարվում է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵՔԴ/0543/02/08 քաղաքացիական գործով 2016թ. ներկայացուցչություն իրականացնելը, իսկ նախորդ տարիներին վերաբերող փաստերը սոսկ հաստատում են Մամիկոն Մանուկյանի կապը «Հայփոստ» ՓԲ ընկերության հետ: Հետևաբար, խորհուրդը գտնում է, որ վաղեմության ժամկետը խախտված չէ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 22.09.2016թ. թիվ 410-Ա ԿԳ-16207 որոշմամբ փաստաբան Մամիկոն Մանուկյանի (արտոնագիր թիվ 349) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններ Մամիկոն Մանուկյանին և «Հայփոստ» ՓԲԸ-ին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Կարեն Մեժլումյան**